ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/26

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 21.02.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Թրաք Սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 21.02.2019թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. հունվար ամսին հայտարարել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ բեռնատարների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման՝ յոթ չափաբաժնով: «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ն 6-րդ չափաբաժնով մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին՝ ներկայացնելով ՀՀ օրենսդրությամբ և հրավերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Էլեկտրոնային աճուրդի մասնակցության պայմանները սահմանված են հանձնաժողովի 2019թ. հունվարի 9-ի թիվ 1 որոշմամբ: Տվյալ փաստաթղթով ի թիվս այլ չափանիշների,

նախատեսված էներկայացված գների գերազանցման չափանիշը, որը գնահատվում է հետևյալ կարգով.

1) Աճուրդի բոլոր չափաբաժինների արդյունքն ամփոփվելու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների համար գնման հայտով սահմանված գները, գնման ընթացակարգը, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հայտարարվում է չկայացած:

«Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրության արդյունքներով վեցերորդ չափաբաժնով հայտը մերժվել է, այն հիմքով, որ «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի առաջարկը գերազանցել է տվյալ տողի համար սահմանված նախահաշվային գինը և օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հայտարարվել է չկայացած:

«Թրաք Սերվիս» ՍՊԸ-ն գտնում է, որ ՀՀ ՊՆ գնահատող հանձնաժողովի 2019թ. փետրվարի 8-ի թիվ 3 արձանագրությունն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

«Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի գերազանցել տվյալ տողի համար նախատեսված նախահաշվային գինը: Համաձայն գնման ժամանակացույցի ՀԻՆՈ-700 /իր կիսակցորդով/ համար սահմանվել է 85,958,103 ՀՀ դրամ: Մինչդեռ, 50111220/523 բեռնատարների համար վերանորոգման ծառայությունների 6-րդ չափաբաժնի ՀԻՆՈ-700 /իր կիսակցորդով/ ավտոմեքենայի նորոգման աշխատանքների, պահեստամասերի և վ.ք. նյութերի անվանացանկով նախատեսված տողերի հանրագումարը կազմել է 110,583,553 ՀՀ դրամ: Ընկերության կողմից ներկայացվել է 110,500,000 ՀՀ դրամ գնային առաջարկ, որ նույնիսկ մի փոքր ավելի նվազ է, քան նախահաշվային գինը:

Տվյալ դեպքում տեղի է ունեցել Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, որի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Քննարկվող բառակապակցության սահմանումն ունի ոչ թե ձևական, այլ առարկայական նշանակություն, քանի որ այն ուղղակիորեն կարող է արգելափակել այս կամ այն մասնակցի հնարավորությունը գնման գործընթացի արդյունքներով ճանաչվել որպես հաղթող:

«ՀՀ ՊՆ-ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքներով խախտվել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը, որը գնման գործընթացը կազմակերպողից պահանջում է հետևյալը.

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

ՀՀ օրենսդիրը վերը նշված չափանիշները սահմանելով, անշուշտ, նպատակ է ունեցել բացառել գնման գործընթացում խտրական պայմանների սահմանումը, արհեստական խոչընդոտների ստեղծումը և մասնակիցներին անհիմն պարտականություններով ծանրաբեռնումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնումների հետ բողոքներ քննող անձին խնդրում ենք ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ վերջինիս վերապահված լիազորություններով դադարեցնելու ՀՀ Պաշտպանության նախարարության գնահատող հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 3 արձանագրությունը, և պարտավորեցնել ՀՀ Պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ-ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդում վեցերորդ չափաբաժնով որպես հաղթող ճանաչել «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ին՝ կնքելով համապատասխան պայմանագիր կամ պայմանագրեր:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Արման Սարգսյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 21.02.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 01.03.2019թ. թիվ ՊՆ/02/30-2019 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ 22.02.19թ. N ԳԲԽ-ԷՍ/1/2769-19 բողոքով ներկայացված խնդիրը տեխնիկական վրիպակի արդյունք է: Մասնավորապես՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾԲ-4/2 ծածկագրով ընթացակարգի վեցերորդ չափաբաժնի նախահաշվային գինը պետք է

սահմանվեր վերոնշված չափաբաժնի միավորի գների հանրագումարի չափով՝ 110,583,553 ՀՀ դրամ, այնինչ նախահաշվային գին է սահմանվել 85,958,103 ՀՀ դրամ: Արդյունքում մասնակիցը հայտ է ներկայացրել միավորի գների հանրագումարին մոտ, ինչի հետևանքով էլ մասնակցի գնային առաջարկը (հայտ) ավտոմատ կերպով մերժվել է, քանի որ ընթացակարգը կազմակերպվել էր էլեկտրոնային աճուրդ գնման ձևով»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ բողոքաբերը պնդեց Բողոքն ամբողջությամբ, ինչպես նաև հստակեցում կատարեց Բողոքով ներկայացված պահանջի մասով: Մասնավորապես, բողոքաբերը՝ վերաձևակերպելով բողոքի պահանջը՝ Բողոքներ քննող անձին խնդրեց դադարեցնելու ՀՀ պաշտպանության նախարարության գնահատող հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 3 արձանագրությունը՝ «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի վերաբերյալ կայացված որոշումների մասով, և պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ-ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդում վեցերորդ չափաբաժնով «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր լիազորված ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/26 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 21.02.2019թ. ներկայացված բողոքը, բողոքի լրացումը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.03.2019թ. թիվ ՊՆ/02/30-2019 գրությամբ հայտնած դիրքորոշումը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 29.01.2019թ. նիստի թիվ 2 և 08.02.2019թ. թիվ 3 արձանագրությունները.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով բեռնատարների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾԲ-4/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ): Աճուրդին ի թիվս այլ մասնակիցների

մասնակցության հայտ է ներկայացրել «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ն՝ Աճուրդի 6-րդ չափաբաժնի մասով:

Հանձնաժողովի 29.01.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ Աճուրդի 6-րդ չափաբաժնով սահմանված «ՀԻՆՈ-700 իր կիսակցորդով» բեռնատար ավտոմքենայի վերանորոգման ծառայությունների համար որպես գնման նախահաշվային գին սահմանվել է 85,958,103 դրամը: Նույն չափաբաժնի մասով Ընկերության կողմից առաջարկված վերջնական գինը կազմել է 110,580,000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 08.02.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի գնային առաջարկը գերազանցել է տվյալ տողի համար սահմանված նախահաշվային գինը: Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա Հանձնաժողովը որոշել է Աճուրդը 6-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով հայտնել է, որ Հանձնաժողովի 08.02.2019թ. թիվ 3 արձանագրությամբ ընդունած որոշումն անհիմն է, քանի որ «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի գերազանցել տվյալ ծառայության համար նախատեսված նախահաշվային գինը: Համաձայն գնման ժամանակացույցի՝ /ՀԻՆՈ-700 իր կիսակցորդով/ բեռնատարի վերանորոգման ծառայության համար սահմանվել է 85,958,103 ՀՀ դրամ: Մինչդեռ, 50111220/523 բեռնատարների համար վերանորոգման ծառայությունների 6-րդ չափաբաժնի ՀԻՆՈ-700 /իր կիսակցորդով/ ավտոմեքենայի նորոգման աշխատանքների, պահեստամասերի և վ.ք. նյութերի անվանացանկով նախատեսված տողերի հանրագումարը կազմել է 110,583,553 ՀՀ դրամ: Ընկերության կողմից ներկայացվել է 110,500,000 ՀՀ դրամ գնային առաջարկ, որը ավելի նվազ է, քան նախահաշվային գինը:

Ի պատասխան Բողոքով հայտնած դիրքորոշմանը, ՀՀ պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է Բողոքներ քննող անձին, որ Բողոքով ներկայացված հանգամանքներն առաջացել են տեխնիկական վրիպակի արդյունքում, մասնավորապես՝ Աճուրդի վեցերորդ չափաբաժնի նախահաշվային գինը թյուրիմացաբար սահմանվել է 85,958,103 ՀՀ դրամի չափով, մինչդեռ այն պետք է սահմանվեր վերոնշյալ չափաբաժնում ներառված բաղադրիչների՝ պահեստամասերի, նյութերի, աշխատանքների միավորի գների հանրագումարի չափով՝ 110,583,553 ՀՀ դրամ: Եվ քանի որ Ընկերության գնային առաջարկը կազմել է միավորի գների հանրագումարին մոտ գումար, այդ իսկ պատճառով այն (ինչպես

նաև հայտը) ավտոմատ կերպով մերժվել է, քանի որ գնումը կազմակերպվել էր էլեկտրոնային աճուրդի եղանակով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 24-րդ կետի համաձայն՝ գնման գինը ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվարկված նախահաշվային գինն է:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 18-րդ կետի համաձայն՝ Աճուրդն ամփոփվելու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը, գնման ընթացակարգը, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հայտարարվում է չկայացած:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Աճուրդի 6-րդ չափաբաժնով սահմանված «ՀԻՆՈ-700 իր կիսակցորդով» բեռնատար ավտոմքենայի վերանորոգման ծառայությունների համար որպես գնման նախահաշվային գին սահմանվել է 85,958,103 դրամը:

- Աճուրդի 6-րդ չափաբաժնի մասով Ընկերության կողմից առաջարկված վերջնական գինը կազմել է 110,580,000 ՀՀ դրամ:

- Հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի գնային առաջարկը գերազանցել է տվյալ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը (նախահաշվային գինը):

- Որպես Ընկերության հայտը մերժելու որոշման իրավական հիմք Հանձնաժողովը վկայակոչել է Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

- Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Աճուրդի վեցերորդ չափաբաժնի նախահաշվային գինը թյուրիմացաբար սահմանվել է 85,958,103 ՀՀ դրամի չափով, մինչդեռ այն պետք է սահմանվեր վերոնշյալ չափաբաժնում ներառված բաղադրիչների՝ պահեստամասերի, նյութերի, աշխատանքների միավորի գների հանրագումարի չափով՝ 110,583,553 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աճուրդի վեցերորդ չափաբաժնի նախահաշվային գինը փաստացի կազմել է նույն չափաբաժնում ներառված բաղադրիչների՝ պահեստամասերի, նյութերի, աշխատանքների միավորի գների հանրագումարը՝ 110,583,553 ՀՀ դրամ (ինչի մասին վկայել է ՀՀ պաշտպանության նաձարարությունը Բողոքներ քննող անձին ուղղված 01.03.2019թ. թիվ ՊՆ/02/30-2019 գրությամբ), հետևաբար, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերության գնային առաջարկը չէր կարող մերժվել տվյալ գնումը կատարելու համար նախատեսված նախահաշվային գինը գերազանցելու հիմնավորմամբ: Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Աճուրդը 6-րդ չափաբաժնի մասով չէր կարող հայտարարվել չկայացած՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, քանի որ Ընկերության գնային առաջարկը չի գերազնցել տվյալ գնումը կատարելու համար նախատեսված բյուջեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 21.02.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾԲ-4/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ 08.02.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում:

3. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾԲ-4/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ին Աճուրդի 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ